



ՍՈՒՐԲ ԶԱԿՈՒԹ

ԱՌԱՋՆՈՐԴԱՆԻՍՏ ՄԱՅՐ Ե ԿԵՂԵՑԻ

Երրորդ Օր Սուրբ Ծննդեան

08 Յունիս 2017

Կիրակնօրեայ Ընթերցումներ	Էջ 1
Ծնունդը՝ Լրումն Ժամանակի	Էջ 2
Ծանուցումներ	Էջ 4

**ԸՆԹԵՐՑՈՒՄ
ՊՈՂՈՍ ԱՌԱՔԵԱԼԻ
ԵԲՐԱՅԵՑԻՆԵՐՈՒՆ
ԳՐԱԾ ՆԱՄԱԿԻՆ
1.1-12**

Անցեալին բազմաթիւ անգամներ եւ բազմաթիւ կերպերով Աստուած մեր հայրերուն խօսեցաւ մարգարէներուն միջոցաւ, իսկ այս վերջին օրերուն մեզի խօսեցաւ իր Որդիին միջոցաւ:

Անիկա շատ աւելի բարձր է հրեշտակ-ներէն... Աստուած զինք ամէն բանի ժառանգորդ կարգեց եւ անոր միջոցաւ էր որ տիեզերքը ստեղծեց: Որդին, Հօրը փառքին լոյսը եւ անոր էութեան ճշգրիտ պատկերը, որ իր խօսքին զօրութեամբ տիեզերքը կը պահէ, իր անձով մեր մեղքերը սրբելէ ետք երկինքի մէջ նստաւ Աստուածոյ՝ Գերագոյն Զօրութեան աջ կողմը:

Անիկա շատ աւելի բարձր է հրեշտակներէն, ինչպէս Աստուածմէ իրեն տրուած անունը ցոյց կու տայ. որովհետեւ ո՞ր մէկ հրեշտակին երբելիցէ Աստուած ըստւ. «Դուն իմ որդիս ես, այսօ՛ր քեզ ծնայ»: Կամ որո՞ւ ըստւ. «Ես անոր հայր պիտի ըլլամ եւ անիկա ինծի որդի»: Դարձեալ, երբ իր անդրանիկ Որդին

աշխարհ կը դրկէր, ըստւ. «Աստուածոյ բոլոր հրեշտակները թող պաշտեն զայն»:

Աստուած իր հրեշտակներուն մասին խօսած ատեն կ'ըսէ.

«Աստուած իր հրեշտակները ստեղծեց որպէս պատգամաւոր հոգիներ, եւ իր պաշտօնեաները՝ կրակի բոցի պէս»:

Մինչդեռ Որդիին կ'ըսէ.

«Քու աթոռող, ո՛վ Աստուած, յաւիտենական է.

արդարութեամբ կ'իշխես թագաւորութեանդ վրայ:

Արդարութիւնը կը սիրես եւ անիրաւութիւնը կ'ատես:

Ահա թէ ինչու, ո՛վ Աստուած,

քու Աստուածդ ուրախութեան իւղով օծեց քեզ քու ընկերներէդ աւելի»:

Դարձեալ, ուրիշ տեղ մը Որդիին կ'ըսէ.

«Դուն, ո՛վ Տէր, սկիզբէն ստեղծեցիր երկիրը,

եւ երկինքը քու ձեռագործդ

է:

Անոնք պիտի կորսուին.

բայց դուն կաս եւ կը մնաս:

Անոնք հագուստի պէս պիտի մաշին.

վերարկուի մը պէս պիտի ծալլես զանոնք

եւ հագուստի պէս փոխես:

Բայց դուն միշտ նոյնն ես

եւ քու տարիներդ վերջ պիտի չունենան»:

Անոնք պիտի կորսուին.
Կորսուին.
բայց դուն կաս
եւ կը մնաս:

ՅԻՍՈՒՄ ՔՐԻՍՏՈՍԻ Ա.ԻԵՏԱՐԱՆԻՆ ԸՍՏ ՄԱՏԹԵՈՍԻ

2.13-23

Երբ մոգերը Բեթլեհէմին հեռացան, Տիրոջ հրեշտակը Յովսէփի երեւցաւ երազին մէջ եւ ըստ առ. «Ե՛լ, ա՛ռ մանուկն ու իր մայրը եւ փախիր Եգիպտոս. Հո՛ն մնա մինչեւ որ կրկին քեզի յայտնուիմ, որովհետեւ Հերովդէս թագաւոր մանուկը կը փնտոէ՝ զայն սպաննելու համար»։ Յովսէփ արթնցաւ, գիշերով առաւ մանուկն ու մայրը եւ գնաց Եգիպտոս, ուր մնաց մինչեւ Հերովդէսի մահը։ Այս ձեւով իրականացաւ Տիրոջ խօսքը, Ովսիս մարգարէի բերնով ըսուած. «Եգիպտոսէն կանչեցի իմ որդիս»։

Իսկ Հերովդէս երբ տեսաւ որ մոգերը զինք խաղի բերին, սաստիկ զայրացաւ եւ մարդիկ զրկեց որպէսզի սպաննեն Բեթլհէմի մէջ եւ անոր շրջակայքը գտնուող բոլոր երեխաները, որոնք երկու տարեկան եւ կամ աւելի փոքր էին, նկատի առնելով Յիսուսի ծննդեան ժամանակը, որ ստուգած էր մոգերէն։ Այսպիսով իրականացաւ Երեմիա մարգարէին խօսքը, որ կ'ըսէ.

«Գոյժ մը լսուեցաւ Ռամայի մէջ,
Հեծեծանք եւ լացուկոծ դառնագին.
Ռաքէլ իր զաւակներուն համար կուլար

եւ միսիթարուիլ չէր ուզեր,
Քանի այլեւս անոնք չկային»։
Հերովդէսի մահէն ետք ահա Տիրոջ հրեշտակը Եգիպտոսի մէջ Յովսէփի երեւցաւ երազին մէջ եւ ըստ. «Ե՛լ, ա՛ռ մանուկն ու իր մայրը եւ վերադարձիր Իսրայէլի երկիրը, որովհետեւ մանուկը սպաննել ուզողները մահացան»։ Յովսէփ ելաւ, առաւ մանուկն ու իր մայրը եւ վերադարձաւ Իսրայէլի երկիրը։ Սակայն երբ լսեց որ Հերովդէսի տեղ անոր զաւակը՝ Արքեղայոս թագաւորած է Հրէստանի վրայ, հոն երթալու վախցաւ։ Փոխարէնը,

երազի մը մէջ իրեն հրամայուածին համաձան գնաց Գալիլիայի կողմերը եւ բնակեցաւ Նազարէթ քաղաքին մէջ։ Եւ այսպէս իրականացաւ մարգարէներուն խօսքը, թէ Նազովրեցի պիտի կոչուի։



ԾՆՈՒՆԴԸ ԼՐՈՒՄՆ ԺԱՄԱՆԱԿԻ

«Եթէ ես աշխարհ եկած չըլլայի...» (Յհ 15.22)

Յովհաննէսի Աւետարանին մէջ կը կարդանք վերոյիշեալ բառերը, որոնք մեր Տիրոջ՝ Յիսուս Քրիստոսի շրթներէն արտասանուած բառերն են եւ մեզ կը հրաւիրեն մտածելու, թէ՝ ի՞նչ կը պատահէր, եթէ Ան չգար աշխարհ։ Ի՞նչ կը պատահէր եթէ Ան չծնէր Բեթլեհէմի մէջ։ Ի՞նչ կը պատահէր եթէ Ան չպատգամէր ու չփոխանցէր աստուածային ճշմարիտ խօսքերը, եթէ Ան չարտասանէր Աստուծոյ կամքը բացատրող «Երանիները», եթէ Ան չքալէր ջուրի վրայ։ Ի՞նչ կը պատահէր եթէ Ան չբժշկէր հիւանդը, կոյրին տեսողութիւն չտար, խուլին՝ լսողութիւն, համրին՝ խօսելու եւ անդամալոյծին՝ քալելու կարողութիւն։ Ի՞նչ կը պատահէր եթէ Ան մեռելին յարութիւն չտար, եթէ Ան չխաչուէր, չթաղուէր եւ յարութիւն չառնէր, եթէ Ան իր աշակերտներուն չուղարկէր աշխարհ։ Իր ճշմարիտ վարդապետութիւնը քարոզելու։ Ի՞նչ կը պատահէր, ո՞ւր կ'ըլլայինք մենք եւ ի՞նչպիսի աշխարհ կ'ունենայինք։ Արդեօք տարբե՞ր կ'ըլլար մարդկութիւնը, եթէ Ան աշխարհ չգար։

Հին Կտակարանի մարգարէները կը խօսին

սպասուած Մեսիայի մը կամ Փրկիչի մը ծնունդի մասին. ամենէն վառ օրինակներէն մէկն է Միքիա մարգարէի բացատրութիւնը. «Իսկ դուն, ո'վ Բեթղեհէմ, Եփրաթա, թէպէտ Յուղայի հազարաւորներուն մէջ փոքր ես, քեզմէ՛ պիտի ելլէ ինձի համար ա՛ն՝ որ Խորայէլի վրայ կառավարիչ պիտի ըլլայ. Անոր ծագումը վաղեմի, յաւիտենական օրերէն է» (Մք 5.2): Այո՛, եթէ Քրիստոս չգար՝ Աստուծոյ խոստումը չէր իրականանար, եթէ Քրիստոս չգար՝ աշխարհը կը շարունակէր մնալ խաւարի մէջ: Եթէ Քրիստոս չգար չէինք գիտնար, որ «Աստուծած սէր է»: Եթէ Քրիստոս չգար՝ ոչ մէկ տարածութիւն չէր ըլլար մեղքի եւ մարդու միջեւ: Եթէ Քրիստոս չգար՝ չէինք ունենար «Աւետարան»՝ հաւատալու համար: Եթէ Քրիստոս չգար, ո՛չ ծնունդ եւ ո՛չ յարութիւն կ'ըլլար: Եթէ Քրիստոս չգար՝ յոյս չէինք ունենար գերեզմանէն այն կողմ: Եւ վերջապէս, եթէ Քրիստոս չգար՝ կորստեան մատնուած կը մնայինք եւ չէինք ունենար Փրկիչ մը մեղ մեղքերէն ազատագրող:

Կ'արժէ այստեղ լսել հրեշտակի բարի լուրը՝ «Այսօր... Դաւիթի քաղաքին մէջ ձեր Փրկիչը ծնաւ... որ Օծեալ Տէրն է: Հետեւեալը ապացոյց ըլլայ ձեզի.՝ Հոն մանուկ մը պիտի գտնէք՝ խանձարուրով փաթթուած եւ մսուրի մէջ դրուած» (Ղկ 2.11-12): Այո՛, Յիսուսն ինքը ըստ «եթէ աշխարհ եկած ըրլլայի...», բայց փառք Աստուծոյ, որ Ան եկաւ...: Պօղոս առաքեալը գեղեցօրէն բնութագրած է ըսելով. «Բայց հիմա յարմար ժամանակը հասած համարելով՝ Աստուծած աշխարհ դրկեց իր Որդին» որ կնոշմէ մը ծնաւ եւ Որէնքին տակ ապրեցաւ» (Գդ 4.4):

Այսօր կը տօնենք Ծնունդը Մեծ Բարերարին. Ան, որ ծնաւ աղքատիկ մսուրի մը մէջ, յարդէ անկողինին մէջ, խոտէ վերմակի տակ: Աստուծած ժամանակը հասած համարելով՝ դրկեց իր Միածին Որդին եւ իր խոստումը կատարեց: Երբ աշխարհը խաւարի եւ չարութեան մէջ ընկղմած էր, մարդը հեռացած էր Աստուծմէ, աստուծային ճշմարիտ պատկերը խաթարուած էր իր մէջ, չէր ճանչնար սիրոյ Աստուծը, որ իր կեանքի Աղքիւրն էր եւ իր սրտի Կրակը: Մէկ խօսքով՝ ո՛չ կանուխ էր եւ ո՛չ՝ ուշ. Աստուծ կը պատրաստէր աշխարհը, Ան երբէք չմոռցաւ մարդը, չլքեց զայն. ընդհակառակը՝ ճիշտ ժամանակի լրումին ուղարկեց իր Միածին Որդին, որպէսզի աշխարհը վերածուի սիրոյ

Աստուծոյ բնակարանին: Այո՛, Յիսուս մանուկն էր Փրկիչը աշխարհի: Դժբախտաբար, Անոր ծնունդի ժամանակ աշխարհը տեղ չունէր իրեն համար. Ան ծնաւ անշուռք «ախոռի» մէջ: Ան դարձաւ կատարեալ մարդ՝ ամբողջապէս, որպէսզի մարդը աստուծանայ: Ան իր աստուծային բարձրունքէն խոնարհեցաւ, որպէսզի մարդը բարձրանայ եւ մօտենայ Աստուծոյ: Ահաւասիկ՝ ծնունդը Հրաշքի. Հրաշք մը, որ երեսուներեք տարիներ քալեց, պատգամեց, բժշկեց եւ հրաշագործեց: Ան եղաւ մանուկներու ճշմարիտ բարեկամը: Ան եղաւ աշխարհի թշուառներու, վշտակիրներու, խեղճերու եւ հիւանդներու օգնականն ու մխիթարիչը: Ան, ի վերջոյ, եղաւ մեղաւորներու եւ արհամարհուածներու ճշմարիտ կարեկիցը:

Հարց տանք մեք մեզ, թէ այսօր որքանո՞վ ուրախ է մարդը, որ Աստուծոյ Որդին՝ մեր բոլորին Փրկիչը աշխարհ եկաւ: Այսօրուան աշխարհին մէջ, Ծննդեան այս օրերուն նուէրներ կը փոխանակենք իրարու եւ ուրախութեամբ կը բանանք այդ նուէրները: Որքանո՞վ մարդը կ'անդրագառնայ, որ Աստուծած ամենաթանկ նուէրը տուաւ մեզի, ո՛չ թէ փայլուն թուղթի մը մէջ եւ գոյնզգոյն ժապաւէններով զարդարուած, այլ՝ պարզ խանձարուրի մէջ փաթթուած եւ անշուռք ախոռի մէջ ծնած Փրկիչ մը. այդ նուէրը քուկի է, իմս է, մեր բոլորինն է: Այդ նուէրը այնտեղ է՝ մեր սեփականութիւնն է. անձնապէս պէտք է երթանք եւ վերցնենք: Պատրա՞ստ ենք երթալու, այդ ճամբորդութիւնը կատարելու, Ծնածը տեսնելու, Փրկիչը գրկելու եւ փոխադրելու մեր սրտերուն եւ հոգիներուն մէջ, դարձնելու հաւատքի եւ սիրոյ մարմնացումը:

Ժամանակը իր լրումին հասած է. այսօրուան աշխարհը որքա՞ն կարիքը ունի խաղաղութեան եւ արդարութեան հշխանին եւ սիրող Փրկիչին: Աստուծած ժամանակը հասած համարելով՝ իր Միածին Որդիին միջոցով եկաւ այս անարդար աշխարհը արդար ու խաղաղ աշխարհի վերածելու, իր ամէնէն թանկ կեանքը տուաւ, որպէսզի մարդը խաւարէն դէպի Լոյս, մահէն դէպի Կեանք առաջնորդուի: Երեսուներեք տարիներ յետոյ իր տնօրինական կեանքը լրումին հասցուց եւ իր առաքելութիւնն աւարտեց ու դարձեալ երկինք բարձրացաւ եւ նստեցաւ իր Հօր աջ կողմը: Ի՞նչ փոխուեցաւ այս աշխարհին մէջ: - Ոչի՞նչ.

մարդը մնաց մեղքի նոյն տիղմին մէջ, աշխարհը մնաց անարդար, չարը շարունակեց տիրապետել, կեղծիքն ու սուտը խորացան: Դժբախտաբար, մարդը մնաց նոյն անհնազանդ արարածը, անտեսեց աստուածային պատուիրանները, շարունակեց սպաննել, գողնալ եւ ուրիշին ունեցուածքը յափշտակել. վկայ պատմութիւնը մեր ժողովուրդի: Հայոց ցեղասպանութենէն 100 տարի յետոյ ոչինչ փոխուած է. մեր թշնամին տակաւին կ'ուրանայ իր կատարած մեծագոյն մեղքը: Աշխարհը կը մնայ լուռ եւ անարդար: Ականատես եւ ականջալուր ենք այսօր, թէ ինչպէս մարդիկ կը շարունակեն չարին հնագանդիլ, չարութեամբ, ատելութեամբ ու վրէժինդրութեամբ վերաբերուիլ իրենց նմանին հետ, սպաննել ու կոտորել:

Այսօր, մարդկութիւնը մէկ ընելիք ունի՝ իր հայեացքը դարձնել դէպի Բեթղեհեմ՝ արդարութիւնն ու խաղաղութիւնը վերահաստատելու, իր հայեացքը դարձնել դէպի Գողգոթա՝ լսելու Փրկիչին ձայնը՝ «Ես յաղթեցի աշխարհին»: Իր հայեացքը դարձնել դէպի Ս. Յարութեան տաճար, յարուցեալ Քրիստոսի հետ մաքրուելու եւ վերածնելու:

Ահա՝ պատգամը հրաշափառ Ս. Ծննդեան: Ահա՝ երաշխիքը մեր փրկութեան: Ահա՝ ճանապարհը յաւերժութեան:

* * *

Ս. Ծննդեան տօնին առիթով, սիրոյ իմ սրտագին ողջոյնս կ'ուղղեմ ձեզի՝ բոլորիդ, մեր ժողովուրդի բոլոր զաւակներուն անխտիր, Ազգային երեսփոխանական ժողովի անդամներուն, Կրօնական եւ Ազգային Վարչութեան անդամներուն, Հոգեւոր Դասին, Ազգային Պատգամաւորներուն, Առաջնորդարանի բոլոր Խորհուրդներուն եւ Յանձնախումբերուն, Եկեղեցիներու Հոգաբարձութիւններուն, Եկեղեցիներու Դպրաց Դասերուն եւ Սարկաւագներուն, Հայ Յեղափոխական Դաշնակցութեան, Հ.Յ.Դ. «Հորիզոն» Շաբաթաթերթի Վարիչ Խմբագրին ու անձնակազմին, Հ.Յ.Դ. Երիտասարդական եւ Պատանեկան Միութիւններուն, Հայ Օգնութեան Միութեան, Հայ Մարմնակրթական Ընդհանուր Միութեան, Համագործային Հայ

Կրթական եւ Մշակութային Միութեան եւ բոլոր կազմակերպութիւններուն, Ազգային Վարժարաններու եւ Կիրակնօրեայ ու Շաբաթօրեայ դպրոցներու ուսուցչական կազմերուն եւ ուսանողութեան:

Զեզի եւ Մեզի Մեծ Աւետիս՝
Քրիստոս Ծնաւ եւ Յայտնեցաւ:

ԲԱԲԳԻՆ ԱՐՔԵՊԻՍԿՈՊՈՍ
Առաջնորդ
Գանատայի Հայոց Թեմի

6 Յունիար 2017

ՏՆՈՐԴՆԵՔ

Տնօրինեք փափաքող
ընտանիքները,
թող բարեհաճին դիմել
Տ. Գառնիկ
Աւ. Քհն. Գոյունեանի,
հեռածայնելով
514 909 5203 թիվն:

ՀԻՒԱՆԴԱՐՈՒ ԱՅԵԼՈՒԹԻՒՆ

Բարեհաճեցէք հեռածայնել
Արժ. Տ. Գառնիկ
Աւ. Քհն. Գոյունեանի.
514 909 5203 թիվն:

Հոգեւագաւառ
Զեր արշանագրութեանները
և անօրօք կատարեցէք կարուելով
եկեղեցի դիւնաւոն: